

ՀՀ ֆինանսների նախարարություն

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 31/9

28 հուլիսի 2015 թ.

Քննարկվեց քաղաքացի Վալենտինա Փալանդուզյանի գանգատը ՀՀ ՖՆ Իջևանի ՏՀՏ պետի 02.06.2015 թ-ի թիվ 1023 որոշման դեմ:

Քաղաքացի Վալենտինա Փալանդուզյանի գանգատում բերված փաստարկները.

Վալենտինա Փալանդուզյանը (այսուհետ նաև գանգատաբեր) հայտնում է, որ հանսիացել է անհատ ձեռնարկատեր, սակայն 10.03.2015թ.-ին լուծարվել է:

Գանգատաբերը հայտնում է նաև, որ Տավուշի ՏՀՏ պետի կողմից 03.03.2005թ.-ի տրվել է տեղեկանք, որի համաձայն ԱԶ-ն Վալենտինա Փալանդուզյանը պետական բյուջեի և պարտադիր սոցիալական ապահովագրական վճարների գծով պարտավորություններ չունի: Սակայն, Իջևանի ՏՀՏ պետի 02.06.2015թ.-ի թիվ 1023 որոշման համաձայն 02.06.2015 թ-ի դրությամբ Վալենտինա Փալանդուզյանը ունի 236.448 դրամի չափով հարկային պարտավորություն, որի դեմ գանգատաբերը առարկում է:

Ելնելով վերոգրյալից՝ Վալենտինա Փալանդուզյանը խնդրում է անվավեր ճանաչել Իջևանի ՏՀՏ պետի 02.06.2015թ.-ի թիվ 1023 որոշումը:

ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ՖՆ Իջևանի ՏՀՏ պետը, քննարկելով Վալենտինա Փալանդուզյանի վերաբերյալ վարչական վարույթի նյութերը պարզել է, որ 02.06.2015 թ-ի դրությամբ նրա չկատարված հարկային պարտավորությունները կազմում են 236.448 դրամ, որից ԱԱՀ-ի գծով 33 դրամ, պարտադիր սոցիալական ապահովագրական վճարների գծով 236.415 դրամ:

Արդյունքում, ղեկավարվելով «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 29.1 հոդվածի և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 55-րդ, 56-րդ, 58-րդ, 88-րդ հոդվածների դրույթներով ՀՀ ՖՆ Իջևանի ՏՀՏ պետի կողմից 02.06.2015 թ-ին ընդունվել է թիվ 1023 որոշումը (այսուհետ նաև Որոշում) Վալենտինա Փալանդուզյանից 236.448 դրամ պարտավորության գումար գանձելու վերաբերյալ:

Նսիտի ընթացքում Հանձնաժողովին ներկայացվեցին Տավուշի ՏՀՏ պետի կողմից 03.03.2005թ.-ին տրված տեղեկանքներն այն մասին, որ 03.03.2005թ.-ի դրությամբ Ա/Ձ Վալենտինա Փալանդուզյանը պետական բյուջեի և պարտադիր սոցիալական ապահովագրական վճարների գծով պարտավորություններ չունի:

Տվյալ դեպքում հարկ է նշել, որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի համաձայն. «1. Վարչական մարմինը պարտավոր է ապահովել փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և

օբյեկտիվ քննարկումը՝ բացահայտելով գործի բոլոր, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները:

2. Վարչական մարմինն իրավունք չունի չընդունելու վարչական վարույթի մասնակիցների ներկայացրած՝ վարույթին առնչվող դիմումները և փաստաթղթերը, որոնց քննարկումը մտնում է իր իրավասության մեջ»:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի դրույթներով, ինչպես նաև հիմք ընդունելով այն հանգամանքը, որ Ա/Ձ Վալենտինա Փալանդուզյանը գործունեությունը դադարեցրել է (լուծարվել է) 10.03.2015թ.-ին, Հանձնաժողովը գտնում է, որ գանգատը ենթակա է բավարարման:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է՝

Չեղյալ համարել ՀՀ ՖՆ Իջևանի ՏՀՏ պետի 02.06.2015 թ-ի թիվ 1023 որոշումը:

Հանձնաժողովի նախագահ՝



Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ

